



**Եղվարդի Օրհուս կենտրոնի 2013թ.  
կատարած աշխատանքների տարեկան  
հաշվետվություն  
/փետրվար-նոյեմբեր/**

## Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

### 1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին.

Եղվարդի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրինա) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Եղվարդի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 59 միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

#### Միջոցառում Բանակ

Անվանումը	քանակը	տոկոս
Հասարակական և կյոթ սեղան-քննարկումներ	8	-
Հանրային լսումներ	0	-
Գործնական աշխատանքներ և արձագանքներ	3	-
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	18	-
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	23	-
Շնորհանդես	1	-
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	9	-
Փորձագիտական խորհրդի նիստեր	2	-
Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը		-
ՀԿ ներկայացուցիչները	<b>427</b>	36%
պատանիներն ու երիտասարդներ	<b>421</b>	33%
ՁԼՄ ներկայացուցիչներ	<b>8</b>	0.6 %
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	<b>370</b>	29%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	<b>18</b>	1.4%

**Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը**

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 393 մարդ:

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
ԱՄԻՍՆԵՐ	ՏՊԻՉԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ	ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ	ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ	ՖԻԼՄԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ
ՓՈՏՏՐՎԱՐ	5	1	3	-
ՄԱՐՏ	2	3	4	-
ԱՊՐԻԼ	2	2	12	5
ՄԱՅԻՍ	10	6	44	
ՀՈՒՆԻՍ	15	3	25	-
ՀՈՒԼԻՍ	23	7	48	4
ՕԳՈՍՏՈՍ	19	1	37	-
ՍԵՊՏԵՄԲԵՐ	7	4	28	1
ՀՈԿՏԵՄԲԵՐ	12	2	20	3
ՆՈՅԵՄԲԵՐ	10	-	13	1

ԶԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/

- TV - 22 հեռուստաալիքի եթերում հարցազրույց Շավարշ Գևորգյանի հետ, "Խոսքի իրավունք" հաղորդում
- Թերթ- "Կոտայք" մարզային թերթ
- Կայքեր – [www.7or.am](http://www.7or.am), [www.ankakh.am](http://www.ankakh.am), [www.irakan.info](http://www.irakan.info), [www.hayernaysor.am](http://www.hayernaysor.am), [www.panarmenian.net](http://www.panarmenian.net), [www.anews.am](http://www.anews.am) , [www.yeenet.eu](http://www.yeenet.eu)

Փորձագետների խորհրդի նիստ /քանի անգամ, ինչ է քննարկվել, տարեկան պլաններ/

Այս ժամանակահատվածում Եղվարդի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել երկու փորձագետների նիստ, որից առաջինի ժամանակ քննարկվել է տարեկան աշխատանքային պլանն ու հաստատումը, կենտրոնի փորձագետների խորհրդի կազմի նոր անդամների ընտրությունը, իսկ երկրորդ նիստի ժամանակ քննարկվել է կենտրոնի 2013թ. գործունեության մասին:



**Մրագրի իրագործումն ըստ դրված նպատակների.**

**1.1 ՆՊԱՏԱԿ 1**

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրինուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

*1.1.1 Այս ժամանակահատվածում կենտրոնի կողմից նախաձեռնվել և իրականացվել են թվով 14 սեմինար քննարկումներ, հանդիպումներ ուղղված բարձրացնելու հասարակության տեղեկատվության մակարդակը Օրինուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի մասին: Ինչպես նաև կենտրոնի կողմից իրականացվող մի շարք միջոցառումների և ծրագրերի ժամանակ նա լուսաբանվել են Օրինուսի կոնվենցիան: Սեմինարներ տեղի են ունեցել Նոր Գեղի, Արենի, Եղվարդ, Ջորավան, Քարաշամբ, Նոր Արտամետ, Ջովունի համայնքներում, լուսաբանվել է նաև տեղական և միջազգային ծրագրերի մասնակցության ժամանակ: Սեմինարներին մասնակցել են գյուղապետարանի, քաղաքապետարանի աշխատակիցներ, ուսուցիչներ, երիտասարդներ, ՀԿ ներկայացուցիչներ և աշակերտներ:*

*1.1.2 Լուսաբանման արդյունքում Օրինուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի վերաբերյալ բարձացել է հասարակության իրազեկվածության մակարդակը:*

**1.2 ՆՊԱՏԱԿ 2**

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

*1.2.1 Մշտապես կենտրոնի ուշադրության կենտրոնում է եղել ջրամատակարարման և ջրի որակի հարցերը: Այս կետի համաձայն իրականացվել են խորհրդատվական հանդիպումներ բնակիչների հետ, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղարկվել պատկան մարմիններին: Բնակիչների ահազանգերին արձագանքելով ջրի որակի վերաբերյալ հարցումներ են ուղարկվել “Երևան Ջուր” ՓԲԸ, որոնք նշված հասցեի մի քանի բնակարաններում*



*իրականացրել են ջրի մոնիթորինգ՝ պարզելու արդյոք ջուրը համապատասխանում է սանիտարական նորմերին և կանոններին: Բնակիչների կողմից ահազանգվել է նաև ջրատար խողովակների վթարի մասին, որի մասին տեղեկացվել է պատկան մարմիններին, որոնք էլ արձագանքել և խնդրի արագ լուծումն են գտել: Այս ժամանակահատվածում նման հարցերի համար դիմումներ ներկայացվել են Եղվարդ և Քարաշամբ համայնքների համար:*

*1.2.2 Այստեղ որպես արդյունք կարող է համարվել այն, որ վերոնշյալ խնդիրներն իրենց լուծումները գտել են կենտրոնի կողմից խնդիրը վեր հանելու, բարձրաձայնելու և հետևողականության ու հսկողության արդյունքում:*

### ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լսումներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

*1.2.3 Կենտրոնի աշխատակիցը այս ժամանակահատվածում չի մասնակցել հասարակական լսումների, քանի որ տարածաշրջանում տեղի չեն ունեցել հասարակական լսումներ:*

### 1.3 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարքայակներ և այլն):

*1.3.1 Նշված կետի համաձայն իրականացվել են հանդիպումներ, քննարկումներ Բուժականի, Քարաշամբի, Զորավանի, համայնքապետարաններում, որի ժամանակ քննարկվել և բարձրաձայնվել են տեղի բնապահպանական խնդիրներն ու լուծման տարբերակներ առաջարկվել, համագործակցության քայլեր ձեռնարկվել:*

*1.3.1.1 Հանդիպումների արդյունքում վեր են հանվել տեղի բնապահպանական խնդիրները, քննարկել և մշակվել են խնդիրների լուծման տարբերակներ:*

*1.3.2 Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը "Եղվարդ" ԵԲՀԿ հետ համատեղ, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության ֆինանսավորմամբ և Երիտասարդական ակումբների դաշնության հետ համագործակցությամբ իրականացրել է "Հայաստանի հրաշալիքները երիտասարդների աչքերով" մարզային ծրագիրը, որին մասնակցել են երիտասարդներ գրեթե բոլոր մարզերից: Ծրագրի նպատակն էր նպաստել բնության հուշարձանների, տեսարժան վայրերի մասին երիտասարդության տեղեկացվածության մակարդակի*



բարձրացմանն ու Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկի համալրմանը: Ծրագրի շրջանակներում կենտրոնում ՀՀ մարզերից ժամանած 20 երիտասարդների համար անցկացվել է սեմինար, որի ընթացքում ծրագրի փորձագետ Հայաստանի Օրինա կենտրոնների PR մենեջեր Մ. Զաքրյանը խոսել է բնության, մարդ-բնություն փոխհարաբերությունների, բնության գիտակցաբար պահպանության մասին, շնորհանդեսի միջոցով տեղեկություններ է հաղորդել բնության պահպանության ձևերի, պահպանվող տարածքների, բնության հուշարձանների, դրանց պահպանության ռեժիմների վերաբերյալ, անդրադառնելով հասարակության տեղեկացված լինելու իրավունքին և որոշումների կայացմանը մասնակցության հնարավորություններին: Սեմինարին հաջորդել են 5 արշավներ դեպի Բուժական, Աղվերան, Աղավնաձոր, Հանքավան և Գառնի, որի ժամանակ երիտասարդները բացահայտել, լուսանկարել և հավաքագրել են տեղեկատվություն նոր հավանական բնության հուշարձանների վերաբերյալ: Նշված լուսանկարներով և հավաքագրված տեղեկատվությամբ ծրագրի ավարտին տպագրվել է տեղեկատվական գրքույկ: Ինչպես նաև ծրագրի ընթացքում բացահայտած նոր հավանական բնության հուշարձանների մասին տեղեկատվությամբ կազմվել է առաջարկությունների փաթեթ, որն էլ ներկայացվել է պատկան մարմիններին Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկի համալրման համար:

1.4.2.1 Ծրագրի արդյունքում բարձրացել է երիտասարդների տեղեկացվածության մակարդակը ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների և տեսարժան վայրերի մասին: Արդյունքում տպագրվել է տեղեկատվական թերթիկ ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների և տեսարժան վայրերի մասին, որն էլ տարածվել է ՀՀ մարզերում: Ինչպես նաև ծրագրի արդյունքում ներկայացվել է առաջարկությունների փաթեթ ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկի համալրման մասին:

#### 1.4 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

1.4.1 Եղվարդի Օրինա կենտրոնի գործունեության մեջ գերակշռում են էկոկրթական միջոցառումներն ու ծրագրերը: Այս կետի համաձայն իրականացվել են համապատասխան միջոցառումներ, այդ թվում այս տարի ևս շարունակվում է Նաիրիի տարածաշրջանի մի շարք դպրոցներում ԷՌՕԴԾ առարկայի դասավանդումը: Այս ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման սեմինարներ ուսուցիչների համար, կատարվել են այցելություններ դպրոցներ, տեղի



են ունեցել բաց դասեր, սեմինարներ աշակերտների համար՝ Ջովունի, Արենի, Նոր Գեղի, Նոր Արտամետ, Քասախ, Եղվարդ համայնքներում: Պարբերաբար իրականացվել են սեմինարներ, քննարկումներ, ֆիլմի դիտումներ երիտասարդների և աշակերտների համար՝ օգոնային շերտի պահպանության, կլիմայի փոփոխության, աղբի տեսակավորման և վերամշակման մասին, էներգախնայողության մասին: Էներգախնայողության միջազգային օրը տեղի է ունեցել ֆլեշմոբ հանուն էներգախնայողության, որի ժամանակ Եղվարդի մի քանի թաղամասերում տաս քայլով բնակիչներն անջատել են իրենց տան լույսերը, այս օրվան նվիրված տեղի են ունեցել բաց դասեր և ծառատունկ: Բնապահպանական գրեթե բոլոր միջազգային օրերը նշվել են սեմինարների, քննարկումներ և ակցիաների միջոցով: Էկոկրթական միջոցառումներ են տեղի ունեցել ոչ միայն Եղվարդում, այլև Նաիրիի տարածաշրջանի մի շարք դպրոցներում՝ մասնավորապես Նոր Գեղիում, Ջովունիում, Նոր Արտամետում, Ջորավանում: Հունիսի 5-ին Երևանում ևս իրականացվել է էկոկրթական սեմինար ոչ ֆորմալ կրթության սկզբունքով նվիրված շրջակա միջավայրի պահպանության օրվան, որին մասնակցում էին ՀՀ տարբեր մարզերից ժամանած երիտասարդներ: Այս միջոցառումն իրականացվել է Օրրան բարեգործական կազմակերպության հետ համագործակցությամբ: Այս տարի ևս կենտրոնը համագործակցել է Հայաստանի թռչունների պահպանման միության հետ, մասնակցել Եվրոթռչնադիտարկմանը, որին իրենց մասնակցությունն են ունեցել Նոր Գեղի, Նոր Արտամետ և Եղվարդ համայնքների աշակերտները: Այս ժամանակահատվածում նաև իրականացվել է ամենամյա Մարդ-բնություն բնապահպանական ինտելեկտուալ խաղը:

- 1.4.2 Կատարված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի պահպանության հարցերի հետաքրքրության շրջանակը ընդլայնվել է բարձրացել էկոկրթության մակարդակը, ավելի հասանելի և մատչելի է դարձել բնապահպանական տեղեկատվությունը, և իհարկե խթան է հանդիսացել շրջակա միջավայրի պահպանության պատասխանատու վարքագծի ձևավորման համար:

## 1.5 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:



*1.5.1 Այս ժամանակահատվածում ապահովել է կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն ու պահպանումը: Կազմվել և իրականացվել է Կենտրոնի աշխատանքային պլանը, կատարվել և ներկայացվել են աշխատանքային հաշվետվությունները և ֆինանսական փաստաթղթերը:*

2. Ծրագրի ֆինանսական հաշվետվություն: /կարող էր տեսնել կից ֆայլով/
3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

ԵԱՀԿ

Մարզպետարաններ – Կոտայքի մարզպետարան

Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/ - Եղվարդի, Քարաշամբի, Զորավանի, Նոր Գեղիի,

Բուժականի ՏԻՄ-եր

Նախարարություններ – Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության

Նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերով

նախարարություն

ՀԿ-ր - "Եղվարդ" ԵԲՀԿ, "Շեն" ՀԿ, "ԵԱԴ" ՀԿ, "Օրրան" բարեգործական

կազմակերպություն, Հայաստանի թոշունների պահպանություն ՀԿ, Հրազդանի

հակակոռուպցիոն կենտրոն

Քաղաքացիներ - բնակիչներ

ԶԼՄ-ներ - [www.7or.am](http://www.7or.am), [www.ankakh.am](http://www.ankakh.am), [www.irakan.info](http://www.irakan.info), [www.hayernaysor.am](http://www.hayernaysor.am),

[www.panarmenian.net](http://www.panarmenian.net), [www.anews.am](http://www.anews.am), [www.yeenet.eu](http://www.yeenet.eu)

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ  
Վերը նշված 1.4.2 կետի համաձայն, իրականացրած Հայաստանի հրաշալիքները երիտասարդների աչքերով ծրագրի փաստացի արդյունք կարող ենք համարել այն, որ այս նույն ծրագիրը մի փոքր փոփոխված տարբերակով կորից իրականացվելու է մայիս ամսին՝ այս անգամ Եվրամիության "Երիտասարդությունը շարժման մեջ" ծրագրի ֆինանսավորմամբ: Այս ծրագրին մասնակցելու են ոչ միայն հայ երիտասարդներ, այլև Եվրամիության երկրներից ժամանած երիտասարդներ: Այս անգամ ծրագիրը ներառելու է ոչ միայն Կոտայքի մարզը, այլև ամբողջ Հայաստանը:
5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:



Մրագրի շրջանակներում դժվարություններ կարել է ասել, որ չեն առաջացել:

6. Մրագրի գնահատում և շարունակականություն

Կենտրոնն իր գործունեության ընթացքում միշտ աշխատել է Նաիրիի տարածաշրջանի գյուղական համայնքների հետ՝ ստեղծել ցանց: Այս տարի ևս աշխատանքներ են տարվել համայնքներում, իրականացվել են քննարկումներ հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվել և մշակվել են ծրագրեր՝ հետագայում իրականացնելու, համագործակցելու համար: Այս ժամանակահատվածում կատարվել են այցելություններ ընդամենը մի քանի համայնքներ քննարկել և վերհանվել են համայնքներում առկա խնդիրները, այցելություններ համայնքներ շարունակական բնույթ կկրեն, քանի որ փորձը ցույց է տալիս, որ այցելություններն արդյունավետ են և համագործակցության հիմքեր են ստեղծում:

Այս ժամանակահատվածում իրականացվել են տեղական ծրագրեր, որոնք հաջորդ տարում իրականացվելու են միջազգային կառույցների համագործակցությամբ:

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրինա Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ: /կարող եք տեսնել կից ֆայլով/

8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):

Կենտրոնի համակարգող՝ Ռուզաննա Մանյան

E:mail [ruzannamanyan@gmail.com](mailto:ruzannamanyan@gmail.com)

[ruzannamanyan@yandex.ru](mailto:ruzannamanyan@yandex.ru)

Հեռ: 094331055, 022422933